

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՕՐՐԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
 ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտ

ՀՐԿԻՉՎԱԾ ՇՈՒՇԻ (1920) ՔԱՂԱՔԻ ԹԵՄԱՆ
 ՕՍԻՊ ՄԱՆՂԵԼՇՏԱՄԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Օսիպ Մանդելշտամը 20-րդ դարի ռուսական և համաշխարհային պոեզիայի արդեն դասական դեմքերից է, ինքնատիպ բանաստեղծ, արծակագիր, էսսեիստ: Նրա պոեզիայի մեծագույն արժանիքը համարձակ դիմադրությունն է այն մութ ու բռնակալ ուժերին, որոնք մերթ հայտնվում են ստալինիզմի տեսքով, մերթ՝ ցեղասպանության և տեռորի: Հիմա կարող ենք վստահորեն ասել, որ 20-րդ դարի հրեշավոր արհավիրքներից հետո «արվեստն արվեստի համար» տեսությունը թվում է ծաղր, անլուրջ մի բան, խեղկատակի ֆունկցիա, որովհետև գրողին հեռացնում է նրա կարևորագույն մարդկային որակից և փակուղի տանում իսկական արվեստը: Այս ամենը հաստատվում է Օսիպ Մանդելշտամի օրինակով, որը հեռացավ «արվեստն արվեստի համար» տեսությունից իր միջին շրջանի պոեզիայում և ստեղծեց բողոքի և ընդվզման զարմանալի խորը բանաստեղծություններ: Այն ավելի իմաստավորվեց նրա «Վորոնեժյան տետրեր» գործերում, որտեղ աքսորի առաջ կանգնած գրողը պատկերեց ողջ դժոխքը տոտալիտար ռեժիմի:

Մանդելշտամի վերջին գիրքը հեղինակի կենդանության օրոք լույս է տեսել 1928 թ., իսկ 1938-ին նրան սպանեցին ստալինյան համակենտրոնացման ճամբարներից մեկում: Գրողը 47 տարեկան էր: Հիմա առանց նրա պոեզիայի 20-րդ դարի գեղարվեստական և քաղաքական պատկերը կլիներ անկատար: Մոտ քսան տարի նրա գրքերն արգելված էին, և վերջին տասնամյակի՝ վորոնեժյան շրջանի պոեզիան թաղված էր երեք դպրոցական տետրերի մեջ, որոնք նրա այրին՝ Նադեժդա Մանդելշտամը, կարողացավ հասցնել մինչև մեր

օրերը՝ տանելով սրբությանը, ասես նախնիների աճյուն, պատերազմի և քաղաքական ճնշումների միջով: Մանդելշտամի պոեզիան ծայրահեղ վտանգավոր ժամանակներում հայտնված պոեզիա է, բայց որը չվախեցավ և դիմակայեց դարաշրջանի վայրագություններին և հենց այդ ռեպրեսիաների ներքո Մոսկվայում, Պետերբուրգում, Երևանում, Շուշիում ստեղծեց քաղաքական և լիրիկական խոստովանությունների այն շարքերը, որոնք այսօր համաշխարհային լիրիկայի գլուխգործոցներ են:

1930 թ. Մանդելշտամի այցը Հայաստան բեկումնային է դառնում ստեղծագործական և աշխարհաճանաչման առումով: Հայաստանը նրան ապշեցնում է հինավուրց մշակույթով և «սրբագույն լեզվով»: Հայաստանը հայտնվում է նրա թե՛ պոեզիայում և թե՛ հուշագրություններում: Մանդելշտամի հայաստանյան այցի մասին հետաքրքիր դիտարկումներ ունի մանդելշտամագետ Ս. Ավերինցևը. «Մանդելշտամի այցը Հայաստան վերադարձ էր հարազատ ընդերք, այնտեղ՝ որտեղից սկզբնավորվել էր ամեն ինչ, դա այց էր դեպի նախահայրերը, դեպի ակունքները, դեպի նախահիմքերը¹... Իր կյանքի վերջին տարվա ընթացքում, վորոնեժյան աքսորում, Մանդելշտամը նորից է հիշում Հայաստանը և գրում այն մարդկանց մասին, «որոնց աչքերը մխրճված են գանգի մեջ» և որոնք «գրկվել են թթենու պտղի սառնությունից»: Այսպես, հայկական թեման դառնում է նրա ուշ շրջանի պոեզիայի հիմքերից մեկը:

*И уже никогда не раскрою
 В библиотеке авторов гонимых*

*Прекрасной земли пустошью,
 По которой жили первые люди².*

¹ *Осип Мандельштам*, соч.: В 2 т., т. 1, с. 53.

² Նույն տեղում, էջ 165:

Գրողի կարծիքով առաջին մարդիկ սովորել են Հայաստան երկրի գրքով, ուստի հինավուրց երկրի նկատմամբ սիրո և հիացմունքի խոստովանությունը բնական է և ջերմ:

*Как люб мне натугой живущий,
Столетьем считающий год,
Рожающий, спящий, орящий,
К земле пригвожденный нарожд³.*

*Ինչքան սիրելի է ինձ դժվար ապրող,
Հարյուրամյակը տարի հաշվող,
Ծնող, քնող, ճչացող,
Հողին գամված այս ազգը⁴:*

Ավելին, Մանդելշտամը հավաստում է, որ մարդկությունը առաջին անգամ հայերեն է արտաբերել «ջուր» և «գյուղ» բառերը, այնքան նախածագ և հինավուրց է, նրա կարծիքով, հայոց լեզուն: Իսկ Ս. Ավերինցևը Մանդելշտամի երկհատորյակի առաջաբանում գրում է. «Հինավուրց հայկական մշակույթի հետ հանդիպումը Մանդելշտամի համար դառնում է կենսական տպավորությունները ձևավորող հիմք»⁵:

Հայաստանում գրված բանաստեղծություններն ավելի հավաք են, ավելի ժամանակակից: Մանդելշտամին «այցելած» պոետական նոր շնչի հայտնությունը իր հետ բերում էր մի նոր թեմա. բանաստեղծություններ են գրվում վախի և սարսափի մասին: Այն ներկա է, առաջին հերթին, թուրքերի կողմից բարբարոսաբար հրկիզված Շուշին պատկերող «Ֆայտոնչին» բանաստեղծությունում:

³ Նույն տեղում, էջ 165:

⁴ Այս և հետագա թարգմանությունները հոդվածագրիին են:

⁵ *Осип Мандельштам*, соч.: В 2 т., т. 1, с. 53.

*Так в нагорном Карабахе,
В хищном городе Шыше,
Я изведал эти страхи
Сопровожденные пышью⁶.*

*Եվ լեռնային Ղարաբաղում,
Գիշատչային Շուշիում,
Վերապրեցի ես սարսափներ,
Որ ներհակ են մեր Հոգուն:*

Նկատենք, որ Մանդելշտամը «սարսափը» գրում է հոգնակի. «Я изведал эти страхи»՝ վախերը, սարսափները, և այս թեման դառնում է Արցախը պատկերող նրա երկու բանաստեղծությունների՝ «Ֆայտոնչին» և «Ինչպես ժողովրդական ահագնություն» գործերի լեյտմոտիվը: Հայտնվում են վախը և սրան հարակից մյուս գերիշխող թեմաները՝ ժանտախտը, կործանարար անհայտը, «սատանայական նախագահը», հրկիզված տներն ու «մեռած պատուհանները»:

Այս առումով «Ֆայտոնչին» բանաստեղծությունը Մանդելշտամի անգերազանցելի գործերից է: Բանաստեղծությունը բնութագրելիս տեղին է մեջբերել Մանդելշտամի արձակի մասին ռուս արձակագիր Անդրեյ Բիտովի հոդվածից մի հատված, որտեղ նա գրում է. «Եվ երբ Հիշողության ժամանակը մոտենում է, այն դառնում է աղոտ («Եզիպտական դրոշմանիշ», «Թեոդոսիա»), և տպավորությունների ժամանակը և պատումի ժամանակը հանընկնում են, ինչպես՝ «Ճամփորդություն Հայաստան» կամ «Չորրորդ արձակ» գործերում... Այդ ամենը հիմա է: Այդ հիմա-ն հավասար է՝ երջանկությունը տեղի է ունենում ընթերցողի հետ և հիմա»⁷:

Գիշտ է նշում Ա. Բիտովը. հանճարեղ այս բանաստեղ-

⁶ Նույն տեղում, էջ 183:

⁷ *Осип Мандельштам*. «Шум времени». Изд-во «Вагриус». М., 2002.

ծությունը, որ գրվել է 1930 թ. Լեռնային Ղարաբաղում, «Հայաստան» բանաստեղծական շարքից հետո, վկայում է, որ նախ Հայաստանը 20-րդ դարի մեծագույն բանաստեղծի համար ոչ թե պատահական հրապույր է եղել, զբոսաշրջիկի հպանցիկ տպավորություն, այլ կենսագրական խորիմաստ փաստ և ապա՝ որ հայկական թեման նրա համար ոչ թե տեղային, այլ համընդհանրական, կարելի է ասել՝ մետաֆիզիկական-գոյաբանական բանալի է դարձել լինելության ողջ ողբերգականությունը բացելու համար: Մեջբերում ենք Նադեժդա Մանդելշտամի հուշերի՝ «Ֆայտոնչին» բանաստեղծությանը վերաբերող հատվածը. «...վերջին մեկնումը էրիվանից. Հայաստանում մեր ճամփորդության ավարտը: Լուսաբացին մենք ավտոբուսով Գյանջայից մեկնեցինք Շուշի: Քաղաքն սկսվում էր անվերջանալի գերեզմանոցով, ապա՝ փոքրիկ շուկայի հրապարակն էր, ուր իջնում էին հոշոտված քաղաքի փողոցները: Մեզ արդեն վիճակվել էր տեսնել բնակիչների կողմից լքված գյուղեր, որ մի քանի կիսաքանդ տներից էին բաղկացած, բայց երբեմնի, ինչպես երևում էր, հարուստ և բարեկարգ այս քաղաքում աղետի ու ցեղասպանության պատկերները սոսկալիորեն դեռ աչքի առաջ էին: Մենք անցանք փողոցներով, և ամենուրեք նույնը՝ անտանիք, անլուսամուտ, անդուռ տների երկշարը: Լուսամուտների բացվածքներից երևում էին դատարկ սենյակները»⁸...

Նադեժդա Մանդելշտամը իր վերհուշ-արձակով կարծես լրացնում է ամուսնու՝ Օսիպ Մանդելշտամի «Ֆայտոնչին» բանաստեղծության պատկերներն ու տեսիլքները: Շուշիի ավերակների մասին նա գրում է հետևյալը. «Բոլոր միջնապատերը քանդված էին, և այդ կմախքների արանքից երևում էր երկնի կապույտը: Ասում են, որ կոտորածից հետո բոլոր ջրհորները լեփ-լեցուն էին դիակներով: Իսկ եթե կար մեկը, որ

ողջ էր մնացել, ապա փախել էր մահվան այդ քաղաքից»⁹: Նադեժդա Մանդելշտամի արձակը հնարավորություն է տալիս ավելի մանրամասն և ճշգրիտ նկարագրել հրկիզված Շուշիի հրեշավոր պատկերը. «Դեպի լեռը ձգվող փողոցներում մենք չհանդիպեցինք և ոչ մի մարդու: Միայն ներքևում, շուկայի հրապարակում, վխտում էր ամբոխը, բայց նրանց մեջ չկար և ոչ մի հայ՝ միայն մուսուլմաններ էին»¹⁰: Մանդելշտամի կնոջ աչքը իսկույն նկատում է հայերի կատարյալ բացակայությունը հայկական քաղաքում: Նա, բարբարոսաբար ավերված քաղաքը նկարագրելուն զուգահեռ, պատկերում է բանաստեղծ ամուսնու հոգեվիճակը, նրա սոսկահար վերաբերմունքը ավերմունքին. «Օսիպ Մանդելշտամի տպավորությունն այն էր, որ շուկայի մուսուլմաններն այն մարդասպանների մնացուկներն են, որոնք տասը տարի առաջ ավերել են քաղաքը, միայն թե դա նրանց օգուտ չտվեց. ամենուրեք նույն արևելյան աղքատությունը, հրեշավոր ցնցոտիները, դեմքերին՝ թարախոտ պալարներ: Բռերով վաճառում էին եգիպտացորենի ալյուր, նաև՝ եգիպտացորենի կողր, բլիթներ: Մենք չհամարձակվեցինք այդ ձեռքերից գնել բլիթներ, չնայած քաղցած էինք»¹¹:

Եվ այստեղ Նադեժդա Մանդելշտամը մեջբերում է ամուսնու կարծիքը, որը համեմատում է հայկական ջարդերն ու Շուշիի հրկիզումը հրեական ջարդերի հետ. «Օսիպ Մանդելշտամն ասաց, որ Շուշիում նույնն է, ինչ մեզ մոտ, միայն թե այստեղ ավելի ակնառու է, և այդ պատճառով անհնար է մի կտոր հաց ուտել... Եվ ջուր էլ չես խմի այս ջրհորներից... Շուշիում ոչ միայն հյուրանոց չկար, այլև եկվորների համար «օբչո» կոչվող սենյակներ, ուր կանայք ու տղամարդիկ քնում են նույն սենյակում: Գյանջայի ավտոբուսը մեկնում էր՝ առավոտյան: Շուկայի մարդիկ մեզ առաջարկեցին գիշերել իրենց մոտ, բայց ես վախենում էի արևելյան թարախոտ պալարներ-

⁹ Նույն տեղում, հ. 1, էջ 518:

¹⁰ *Осип Мандельштам*, Соч.: В 2 т., т. 1, с. 518.

¹¹ Նույն տեղում, էջ 518:

⁸ *Осип Мандельштам*, соч.: В 2 т., т. 2, с. 518.

րից, իսկ Մանդելշտամը համակված էր այն մտքով, որ մեր առջև ցեղասպաններ են: Որոշեցինք մեկնել Ստեփանակերտ, մարզային քաղաք»¹²:

Բայց պարզվում է, Ստեփանակերտ կարող են հասնել միայն կառքով. «Ահա և մեզ հանդիպեց անքիթ մի ֆայտոնչի, միակը իջևանատեղում, կաշվե դիմածածկով, որը քողարկում էր նրա քիթը և դեմքի կեսը: Իսկ հետո ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես բանաստեղծության մեջ. մենք չէինք հավատում, որ նա մեզ իրոք կհասցնի Ստեփանակերտ...»¹³:

Եվ, վերջապես, նրա կնոջ վերջին դիտարկումը. «Շուշիի մասին բանաստեղծությունը գրվեց Մոսկվայում, 1931թ. ամռանը... Թեման կառապանն է, որն անհայտ է, թե ուր է տանում՝ ժանտախտի նախագահը, դիմակավոր ոմն, ումից կախված ենք մենք...»¹⁴:

Իսկ հիմա քննենք բուն՝ «Ֆայտոնչին» բանաստեղծությունը, որի հենց առաջին տունը ահազանգի և սարսափի հաղորդագրություն է.

*На высоком перевале,
В мусульманской стороне,
Мы со смертью пиrowали —
Было страшно, как во сне.*¹⁵

*Բարձր լեռնանցքում,
Թուրքական կողմում՝
Մահվան հետ խնջույք —
Ասես՝ երազում:*

Ապա նկարագրում է կառապանին, որ քշում էր ասես ոչ թե կառքը, այլ դևերի մի խումբ.

¹² Նույն տեղում, էջ 518:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 518–519:

¹⁵ *Оси Мандельштам*, соч.: В 2 т., т. 2, с. 518.

*Нам попался фазтонщик,
Пропеченный как изюм,
Словно дыявола погонщик,
Односложен и упрям*¹⁶.

*Մեզ բախտ ընկավ մի կառապան,
Որ մրոտ էր՝ չամիչազույն,
Նա դևերի ֆայտոնչին էր,
Միատարր էր՝ խիստ դժգույն:*

Մանդելշտամի այս բանաստեղծությունը տարիներ առաջ Ստեփանակերտում՝ պապական մեր տանը, ես կարդացի հորս՝ շուշեցի բանաստեղծ Միքայել Հարությունյանին: Հայրս ասաց, որ շուշեցի տատս՝ Արուսյակ Քրիստափորի Հարությունյանը, հավանաբար կիմանա այդ զարհուրադեմ կառապանի ով լինելը: Եվ, իսկապես, տատս ճանաչեց նրան՝ Հասան անունով մի ազերի-թուրքի, որի դեմքը քայքայվել էր սիֆիլիսից, և նրա անունով հայ ծնողները վախեցնում էին երեխաներին: Իզուր չէ, որ Մանդելշտամը նրան անվանում է «ժանտախտի նախագահ» և գրում.

*Под кожаную маску
Скрыл ужасные черты,
Он кудато гнал козяку
До последней хрипоты*¹⁷.

*Կաշվե քողի տակ՝
Սուկանք-դիմազիծ,
Քշում էր կառքը,
Արձակում՝ խոհնչ:*

¹⁶ Նույն տեղում, էջ 183:

¹⁷ Նույն տեղում:

Նադեժդա Մանդելշտամը նշում է կարևոր հանգամանք. «Բանաստեղծությունը ստեղծվել է կոնկրետ դեպքի և մի ավելի ընդարձակ մտապատկերի շնորհիվ. դա է գործի իմաստը: Մենք շատ քիչ բան գիտեինք այդ ժանտախտահար նախագահի մասին»¹⁸:

«Ֆայտոնչին» բանաստեղծության հենց առաջին տողերը օգտագործում են «խնջույք» բառը, բայց դա Դանթեի նշած հոգևոր խնջույքը չէ՝ Աստծո իմացության ճանապարհին, սա «խնջույք» է մահվան և ավերմունքի:

Քայքայված դեմքով կառապանը հայտնվում է ասես մահվան և կենդանական աշխարհից.

*По горький крик араба,
По бессмысленное "го" —
Словно розу или жабу,
Он берет свое лицо*¹⁹.

Կառապանը Մանդելշտամի համար դառնում է հանցագործ կերպար, որի դեմքն արտացոլում է նրա և նրա համայնքի բարբարոս էությունը, և բանաստեղծը չի սխալվում. կառապանը Շուշին հրկիզող նախնիների դասական ժառանգն է, և այդ ամենը դրոշմված է նրա դեմքին.

*Я очулся: стой, приятель!
Я припамял - черт возьми!
Это чинный председатель
Заблудился с лошади*²⁰!

¹⁸ Նույն տեղում, էջ 519:

¹⁹ Նույն տեղում, էջ 183:

²⁰ Նույն տեղում:

*Սթափվեցի՝ կանգնի՛ր, ընկե՛ր,
Վերհիշեցի՝ ա՛յ քեզ բան,
Այս ժանտախտի նախագահը
Կորցրել է իր ճամփան:*

Վրա է հասնում սթափության և սարսափի պահը (որերորդ անգամ), բայց արդեն ուշ է, որովհետև անգամ այս դժնադեմ և սատանայական կառապանը, Մանդելշտամի կարծիքով, իր ձիերի հետ միասին կորցրել է իրական ճանապարհը և նրանց տանում է կործանման: Այսպես, «անքիթ նախագահը» ճամփորդության ընթացքում դառնում է կյանքի մութ ուժերի «նախագահ»:

Բանաստեղծությունը մոտենում է իր ավարտին, և թվում է՝ Մանդելշտամը գրոտեսկային-չարագուշակ այս կառապանի կերպարից այն կողմ ոչինչ չի տեսնելու և զբաղվելու է միայն իր և կնոջ ներաշխարհում ծավալվող «ներհակ սարսափներով», որ ծնվում են թուրք կառապանի անդեկավարելի շարժումներից և կաշվե դիմակի տակ քողարկված ուրվականային դեմքից, բայց բանաստեղծության հաջորդ տողերը «պայթեցնում են» այս դժնի և սարսափազդու «մասկարադը»՝ բերելով մի ավելի սուսկալի իրողություն, ընթերցողի առաջ սփռելով ողջակիզված Շուշիի սահմուկեցուցիչ պատկերը: Վրա է հասնում Հայոց պատմության սև էջերից մեկի՝ Շուշիի հրկիզման մանդելշտամյան պատկերումը: Ազերի-թուրքի հրկիզած Շուշին հայտնվում է որպես «մեռած պատուհանների» շարք, որ պաշարում են բանաստեղծին բոլոր կողմերից, և Մանդելշտամը գրում է, որ սպանված և խոշտանգված է ոչ միայն հայ բնակչությունը, այլև մարդուն մարդ դարձնող աշխատանքը, որ հիմա՝ ջարդերից հետո, դարձել է «անհոգի բոժոժ»՝ թրթուր, և ողջ լեռն ինքը՝ Շուշիի բարձունքները, կիտկիտված են քրիստոնյաների գերեզմաններով.

*Сорок тысяч мерных окон
Там мертели со всех сторон,
И тирага бездушный кокон
На горах похоронен²¹.*

**Քառասուն Հազար մեռած պատուհան
Պատվում էր չորս բոլորը,
Եվ աշխատանքի անհոգի բոժոժը
Թաղված էր բարձունքում:**

Շուշին դառնում է բարբարոսների «գործունեության» սիմվոլ, ավերված տներն ու «մեռած պատուհանները» այլևս կապ չունեն հազարամյակներով այդտեղ ապրող հայ բնակչության հետ, որովհետև ազերիների հերթական բռնության ալիքից հետո հայտնվել են այլ կեցության մեջ և մարմնավորում են հենց իրենց՝ հրկիզող ջարդարարների իրական դեմքը: Եվ դա է պատճառը, որ Մանդելշտամը գրում է. Շուշիի «մերկացած տները» «անամոթ շիկնում են», իսկ նրանց վրա «միգամածում է երկինքը վերից», ասես, «մուգ կապույտ ժանտախտ»:

*И бесстыдно розовеют
Обнаженные гора,
А над ними небо мреет
Темно-синья чума²².*

**Եվ անամոթ շիկնում են
Մերկ տները հրկիզված,
Նրանց վրա մուգ երկինքը
Միգամած է՝ Հանց ժանտախտ:**

²¹ Նույն տեղում, էջ 184:

²² Նույն տեղում:

«Ֆայտոնչին» բանաստեղծությունն ավարտվում է այսպիսի ողբերգական հնչերանգով. ցեղասպանների վայրագություններից վարակվել և ժանտախտ է ընկել անգամ երկինքը, վտանգված է մարդու բնակավայրը. թե՛ երկիրը և թե՛ երկինքը բերնբերան լցված են ժանտախտով: Ժանտախտը դառնում է ցեղասպանության խորհրդանիշ: Հենց այս բնութագրումով է ավարտում իր բանաստեղծությունը Մանդելշտամը: Այս վերջին հատվածի վրա նաև լույս է սփռում Նադեժդա Մանդելշտամի մեկնաբանությունը. «Ամուսինս նկատի ուներ հայկական կոտորածը, որը 1920 թվականին իրագործեցին ազերբեջանցի մուսաֆաթականները. Շուշիում նրանք սպանեցին 35 հազար հայ»²³:

Մանդելշտամի հաջորդ բանաստեղծությունը, որն անվերնագիր է, օրգանապես շարունակում է «Ֆայտոնչին» բանաստեղծությունը: Այստեղ տեսածից և վերապրածից սարսափահար Մանդելշտամները փախչում են ներքև՝ դեպի Ստեփանակերտ, և մի պահ խաղաղվում իրենց զարհուրելի տպավորություններից, երբ ճանապարհին նրանց ընդառաջ է գալիս արոտավայրից վերադարձող նախիրը:

«Այդ նախիրի տեսքը, - գրում է Ն. Մանդելշտամը, - մեզ վերադարձրեց խաղաղ կյանքին ընդառաջ. որտեղ նախիր, այնտեղ՝ մարդիկ, ոչ թե՛ միայն կաշվե դիմակով ֆայտոնչի: Մենք այնպիսի զգացում ունեինք, որ փրկվել ենք: Այս բանաստեղծությունները երկվորյակներ են, որ աճել են նույն արմատից, բայց հակադիր զգացողություններով, կյանքի և խելագար, «մինչև վերջին շունչը» անիմաստ, աննպատակ վազքի զգացողություններից»²⁴:

*Как народная громада,
Прощидая землю в пот,*

²³ Նույն տեղում, էջ 519:

²⁴ Նույն տեղում:

*Многоязычное стадо
Пропыленной армией
Ровно в голову плывет:*

Телки с нежными доками

И бычки-боловники,

А за ними корабляной

Буйвалыцы с буйвалами

*И священники-быки*²⁵.

Այսպիսին է Մանդելշտամի արցախյան այցելության տպավորություններից ծնվող գեղարվեստական խոսքի նվաճումը՝ բանաստեղծություններ, որոնք հրատապ են այսօր իրենց դատապարտող ուժով և մարդկության պատմությանն են կտակում ցեղասպանության չարիքի հրաշեկ մի հատված, որտեղ մանդելշտամյան արվեստի ընդգրկումն ու իմաստավորումը առ այսօր ռուս պոեզիայում մնում է չգերազանցված:

²⁵ Նույն տեղում, էջ 184: